

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

+2 (47)
U - 90



Հ. 4. 4. 4. 4. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ՍԵՐԻԱ № 25

05 FEB 2001

Պարբեսաներ բայու լեռների միացել


88

Պ. Ա Տ Ո Ւ 2 Կ Ա

Ա. Խ. Հ. Ա. ՅԵՎ Ռ. Ա. Յ. Խ. Ի. Հ.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՁԵԼՈՒ



ՅԵՎՐՈՒ. Պ. Պ.
1924

342(47)
U-90
4

01 MAR 2010

Պրոլետարենց բալոր յերկրութերի, միացեմ

300
1615-US

Պ. ԱՏՈՒՐԿԱՆ



Ա. Խ. Հ. Մ. ՅԵՎ Ռ. Ա. Յ. Խ.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՁԵՎՈՎ

12406

ԹՈՒԱԿԵՐԵՒԾ ՔԱՐԳԱԿԱՆ
Տ. ՀԱՅՈՒՄՑՈՒՆ

ՏԵՐԵՎ. Ա. Խ.
1924

I.

1918 թվի ՀՈՒԼԻՍ 10-ի ՅԵՎ 1923 թվի
ՀՈՒԼԻՍ 6-ի ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱ-
ԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՆՈՒՅԹԸ

§ 1. Ի՞նչ ԲԱՆ Ե ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՀԱՆՐԱՄԵՍ

Արդի պետության հիմնական որենքները կոչվում են սահմանադրություն։ Այդ որենքների նպատակն եւ գրավոր կերպով արտահայտել տիրող դասակարգի կազմակերպված մասնակցությունը տիրապետության մեջ, այլերպահպահ մասնակցությունը տվյալ ժամանակաշրջանի պետական իշխանության մեջ։ Սահմանադրությունը չկա այն պետության մեջ, վորը կառավարվում է միանեծան ինքնակալ իշխանությամբ և կամ՝ մի խումբ կալվածատերերի հետ և վորտեղ, այդպիսով, դասակարգի մասնակցությունը տիրապետության մեջ անկազմակերպ է։ Այսպես, որինակ, մինչև 1917 թվի փետրվարի 27-ը մեզ մոտ ել հիմնական որենքներ կային, սակայն բնավ սահմանադրությունը չեյին կոչվում, վորովհետեւ խոսում եյին միմիայն թագավորի և նրա մինիստրի անսահմանափակ իշխանության մասին, առանց մի խոսք անդամ հիշատակելու, թե կան և դասակարգային փոխարարերություններ։ Այդ քիչ և նույնիսկ հենց ինքը, սահմանադրությունը բառը արգելված մի խոսք եր համարվում։

Սահմանադրությունը չի մինի և ապագա, կոմունիստական հասարակակարգում, վորտեղ մարդկությունն այլևս բաժանված չի լինի դասակարգերի և հետեւար՝ չի լինի ոյլես և ինքը դասակարգային պետությունը և այսպիսով

4

ավելորդ կը դառնան նաև ամեն տեսակի հիմնական ու բնոքները:

§ 2. ԳՐԻ ԱՌԱԾ ՅԵՎ ԱՆԳԻՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության եյտությունն այն է, վոր նա վոչ միայն վորոշում և իշխանության կազմակերպությունն ու բնույթը և դրան համապատասխան՝ նաև քաղաքացիների ազատությունն ու իրավունքները տվյալ պետության մեջ, այլ և այն է, վոր նա իր կնիքն և դնում պետական ամբողջ իրավակարգի և ընդհանրապես բոլոր այլ որենքների վրա: Սահմանադրության մեջ պարզաբանվում ե տվյալ յերկրի վարչական ձևը (միապետություն և թե հանրապետություն), ինչպես նաև գասակարգային տիրակալության բնույթը (բուրժուական, թե մանր բուրժուական դեմոկրատիա, արիստոկրատիա, թե վերջապես՝ պրոլետարիատի գիշտատուրա): Այս տեսակետից բուրժուական հասարակակարգում մենք պարզ ու փորոշ կերպով կարողանանք զատել իրարից զրի առած (զրապետք և կարողանանք զատել իրարից զրի առած (զրապետք և անգիր սահմանադրությունները, այսինքն՝ սահմանադրություններն կոչված այն «թղթի մի թերթը» պետք ե տարբերենք տվյալ յերկրի հասարակական ուժերի իրական փոխարարերությունից: Վճռական նշանակությունն ունի, ի հարկե տվյալ յերկրի մեջ զործող հասարակական ուժերի իրական (ոյալ) փոխարարերությունը և նա այնքան ել հաճախ չի պատահում, վոր համապատասխան լիներ իր իսկ զրագոր ձեմին: Գրագոր սահմանադրությունները սավորաբար ծնունդ են առնում այն ժամանակ, յերբ այս կամ այն թագավորը կամ արքան զիջումներ են անում հեղափոխական ժողովրդին: Սակայն հեղափոխություններն անցան, և թագավորներն ու արքաները մեկ զիջում մյուսի՝ հետեւ ակսում ելին յետ առնել, առանց վորեւ փոփոխության յենթարկելու դրագոր սահմանադրությունները կը դառնան նաև ամեն տեսակի հիմնական ու բնոքները:

թյունը: Կամ՝ լինում եր այսպես, վոր իշխանության գլուխն անցած բուրժուազիան անգիտակցորեն, կամ գիտակցաբար կեղծելով, սահմանադրություն և հրովարտակել, կազմելով այն ձուոմ և փարթամ խոսքերով, խոստանալով բոլոր քաղաքացիներին ազատություն, յեղբայրություն և հավասարություն, սակայն իրականում հենց ինքն ել վերցրել և բոլոր այդ խռատացյալ ազատությունները, ոգաագործելով զանազան սահմանափակումները և բնավ փոփոխության չենթարկելով սահմանադրության գիտակոր տեկստը: Յեվ ընդհակառակը, շատ անժաման գիտակոր տեկստը: Այս կամ այն գասակարգին իրականում է պատահած և պատահած վրա ազգեցություն և ունեցել պետական գործերի վրա, քան այդ նախատեսնված և յեղել սահմանադրության մեջ:

Պատկերը բոլորովին փոփոխում է, յերբ իշխանությունն անցնում և պրոլետարիատին (բանվոր գասակարգին), կամ՝ բանվոր գասակարգին՝ աշխատավոր գյուղացիության հետ միասին: Այստեղ արդեն վերանում ե ամեն տեսակի կեղծիքն ու կեղծավորությունը և յեթե այդպիսի իշխանությունը դիմում է զրագոր սահմանադրության մշակման, ապա՝ ուժերի իրական փոխարաբերությունն ել համապատասխան և լինում նրա նոր զրագոր ձևակերպման:

Այդ բանում մեզ անհերքելիորեն համոզում ե պրոլետարական հեղափոխության զրագոր տռաջին սահմանադրությունն, այսինքն՝ Ռ.Ս.Ֆ.Խ. Հ. Հանրապետության Սահմանադրությունը, ինչպես նաև Ս.Խ.Հ.Մ.-ի 1923 թվի սահմանադրությունը, վոր տալիս ե ժողովուրդների աշխատանքային ինքնորոշման առաջին իրականը որինակը:

§ 3. Ի՞ՆՉ Ե ՆՇԱՆԱԿՈՒՄ «ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱԸ» ԲԱՌԸ

Բուրժուազիա յենք անվանում հասարակական այն տարրը, հասարակության այն խավը, վորն ապրում է անուն համապատասխան անցան, և թագավորներն ու արքաները մեկ զիջում մյուսի՝ հետեւ ակսում ելին յետ առնել, առանց վորեւ փոփոխության յենթարկելու դրագոր սահմանադրությունները կը դառնան նաև ամեն տեսակի հիմնական ու բնոքները:

գոչ թե իր, այլ ուրիշի աշխատանքով, վորն ոգուտ և շահ է ստանում արդյունաբերական, առևտրական և վարկային գանագան գործարքներից, այդ հասկացողության մեջ առնելով նաև այն բոլոր տարրերին, վորոնք այսպես թե այնպես ապրում են նույն վաստակներով, վորպես բուրժուազիայի ծառաներն ու պնտկալեզները։ Այն հասարակությունը, վորտեղ վճռական խոսքը պատկանում է բուրժուազիային, բնորոշվում է նրանով, վոր այնտեղ տիրապետում է կապիտալիստական արտադրությունն, այսինքն՝ վարձու աշխատանքի միջոցով կատարվող արտադրություն։

Միաժամանակ և քաղաքական իշխանությունն այդպիսի հասարակության մեջ պատկանում է բուրժուազիային, կամ ավելի ճիշտ կապիտալիստաների դասակարգին։

§ 4. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով մենք իրարից տարբերում ենք։

1. Բուրժուական յերկրների սահմանադրությունն, այսինքն այն հիմնական որենքները, վորոնք սահմանում են բուրժուական դասակարգի իշխանությունն, ուրիշ խոսքով, ունենությունը դասակարգի իշխանությունը բանվորների և այլ աշխատավոր տարրերի, կտոր՝ չունենոր դասակարգի վրա, և մյուս կողմից—

2. Բանվորական և կամ բանվորա-գյուղացիական հանրապետության սահմանադրությունն, այսինքն այն հիմնական որենքները, վորոնք սահմանում են բանվոր դասակարգի կամ բանվորների և աշխատավոր գյուղացիության իշխանությունը, և «իրանց հիմնական նպատակն են դնում նեղիների (բուրժուազիայի) դասակարգի ճընշում, մարդկանց դասակարգերի բաժանություն»։

Թյան վերացումն և բուրժուական պետության փոխարինումն սոցիալիստական ազատ հասարակությամբ»։ (հոդված 3):

§ 5. Ի՞ՆՉ ԲԱՆ Ե ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Խոսելով իրավունքի և պետության մասին, մենք հասարակություն խոսքը հասկանում ենք այն իմաստով ինչպիսին վոր նրան տվել ե Մարքսը։ Այդ իմաստով հասարակությունը, դա այն մարդկանց ամբողջությունն է, վորոնք գարգացման վորոշ աստիճանի վրա կապված են իրար արտադրության և փոխանակության պայմանների ամբողջությամբ, նկատելով այն վորպես նրանց փոխհարաբերությունների հիմքը։ Այսպիսով հասարակությունը, դա պատմականորեն փոփոխության յենթարկվող մի յերկույթ և կախված է այն հանգամանքից, թե ինչպիսի բնույթ ունի արտադրության և բարիքների փոխանակության տիրող սիստեմը, ինչ ձև ունի այդ արտադրության միջոցների բաշխումն, այսինքն՝ թե ինչպիսի պատկեր են ներկայացնում տվյալ գարաշը անի սեփականության ձեւը (կոմունիստական և արդյոք, թե մասնավոր ֆեոդալական, կամ թե՝ մասնավոր կապիտալիստական և այլն)։

§ 6. Ի՞ՆՉ ԲԱՆ Ե ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԸ

Մենք խոսում ենք դասակարգացին և ապադասակարգային (կոմունիստական) հասարակության մասին։ Դասակարգ ասելով, մենք հասկանում ենք մարդկանց այնպիսի մեծ խմբավորություներ, վորոնք տարբերվում են իրարից այն տեղով, վոր նրանք գրավում են հասարակական արտադրության պատմականորեն վորոշ սիստեմի մեջ (աշխատանքի մեջ), ինչպես նաև նրանց այն վերաբերմունքով, վոր նրանք ի հայտ են բերում արտադրու-

թյան միջոցների և արդյունքի; այսինքն՝ վաստակի բաշխման մեջ; նշանակում են, փոր բանվորներին, կապիտատալիստներին և հողատերերին հասարակական դասակարգեն դարձնում նախ և առաջ նրանց դերը, նրանց փոխարաբերություններն արտադրական պրոցեսում, նրանց վերաբերություններն արտադրության միջոցների, այսինքն՝ այդ միջոցների մասնավոր սեփականատիրության ձեւականորեն հաստատված բաշխման փաստը:

Հասարակության բաժանումը զանազան դասակարգերի միջտ նշանակում են մարդու շահագործումն ուրիշ մարդու ձեռքով, կամ՝ մեկ խումբ մարդկանց աշխատանքի յուրացումը մյուս խմբի կողմից: Այսպիսով, հասարակական դասակարգերը կապվում են իրար իրանց դասակարգային շահերով, իսկ դասակարգային պայքարը վոչ այլ ինչ են, յեթե վոչ պայքար հանուն դասակարգային շահի, հանուն մասնակցության արտագրության մեջ, այսինքն՝ մի պայքար, վոր մզկում են արտագրության միջոցների մասնավոր սեփականության շուրջը:

§ 7. ԻՆՉՈՎ Ե ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՁԵՎԻՑ

Սոցիալիստական հասարակությունը լինելու յե այսպիսի ազատ մարդկանց միավորություն, վորոնք չգիտեն թե ի՞նչ և շահագործումը և ի՞նչ են մարդուս ձնշումը ուրիշ մարդու կողմից: Այստեղ չի լինի մարդկանց բաժանումը զանազան դասակարգերի (ունեորների և չունեորների), վորոնք իրանց շահերով իրար ներհակ են և հակառակ: Յեվ այնտեղ ամբողջ հասարակությունը հավասար մարդկանց միասնական և ազատ կազմակերպության կիերածվի, մի կազմակերպություն, վորի նպատակն են մարդկանց նյութական և հոգենոր պահանջներին բավարարու-

թյուն տալը: Պետությունն, ընդհակառակը, դասակարգային կազմակերպություն ե, նա հիմնված է մարդկանց անհավասարության վրա և նրա նպատակն ե հասարակության մեկ մասի, կամ մեկ դասակարգի ճնշումը մյուսի կողմից:

§ 8. ԻՆՉ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Բուրժուական պետության նպատակն ե ունեորների (որինակ, կապիտալիստների դասակարգի) իշխանության ապահովումն ու պաշտպանությունը չունեոր տարրերից (որինակ, բանվոր ազգաբնակչությունից, ինչպես քաղաքում, այսպես ել դյուզում): Նա հիմնվում է մարդկանց տնտեսական անհավասարության և մարդու շահագործման (սորկացաման) վրա ուրիշ մարդու կողմից: Այդ սարկացումը նա հաստատում ձեռքով ե կիրառում, չնայած այն հանգամանքին, վոր ունեոր դասակարգը ամբողջ ազգաբնակչության լոկ մի անշան փորրամանությունն ե կազմում:

Հնդհակառակը, բանվոր-գուղացիական Հանրապետությունը, դա այն կազմակերպությունն ե, վորտեղ տիրող են հանդիսանում իրանց շղթաները դեն շպրտած շունեւիոր դասակարգերը, բանվորներն ու չքավոր գյուղացիները, նպատակ գնելով ճաշել իրանց նեղիներին և սարկացնողներին (բուրժուազիային և կալվածատերերին): Այդ հանրապետությունը իր հիմնական նպատակն ե դնում վերացնել մարդուս ամեն տեսակի շահագործումն ուրիշ մարդու կողմից: Հասարակության դասակարգերի բաժանված լինելու փաստի լիակատար վերացումն, հասարակության սոցիալիստական կազմակերպումն և սոցիալիզմի հաստատումըն, վորի պայմաններում չի լինի վոչ դասակարգային շերտափորում, վոչ ել ինքը պետական իշխանությունը:

Պետական այդ ձեռն ևս (բանվոր-գյուղացիական Հանրապետությունը) արդասիք և մարդկանց անհավասարության, բայց նա նակայական մսծամանության մի կազմակերպություն է ընդդեմ վողորմելի փոքրամասնության՝ մարդկանց անհավասարությունը վերացնելու նպատակով:

§ 9. Ի՞ՆՉ ԲԱՆԻ ՎՐԱ ՅԵ ՀԻՄՆՎԱԾ ԲՈՒՐԺՈՒԱՁԻԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կապիտալիսմաների դասակարգի իշխանությունը հիմնվում է այն կենտրոնացված իշխանության վրա, վորպիսին նրանք հաստատել են թե քաղաքներում և թե գյուղերում արտադրության, գրեթե առանց բացառության, բոլոր միջոցների վրա: Նրանց ե պատկանում վհչ միայն հողի, անտառի, յերկրի խորքերի և ջրերի հսկայական մեծամասնությունը, այլև գործարանները, հանքահորերը, յերկաթուղիները և ամբողջ կենդանի և անկենդան ինվենտարը, վորպիսի հանգամանքը նարավորություն ե տալիս նրանց ըստ իրանց հայեցողություն կիրառել չունեոր ազգաբնակչության մասսաների սարկացումը:

Սակայն, այդ մասսաները ստրկացման վիճակում պահել են կարողանում նրանք լոկ չնորհիվ նրանց հլու և հնագանդ գորքերի, նրանց հավատարիմ շինունիկության, վոստիկանության, դատարանների, յեկեղեցու և մամուլի: Այդ որդանները, բուրժուազիայի հնագանդ ծառաները լինելով, իրենց հերթին յենթակա յեն կապիտալիզմի կենտրոնական իշխանությանը, ֆինանսական և բանկային կապիտալիզմին:

§ 10. Ի՞ՆՉ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՏԱՊԱԼԵԼ ԲՈՒՐԺՈՒԱՁԻԱՅԻ ԼՈՒԾԸ

Բուրժուազիայի այդ լուծը կարելի յե տապալել միայն մեկ ճանապարհով, այն ե. հանրագիտային սեփա-

կանություն դարձնել արտադրության միջոցները և բանկերի հսկայական հարստությունները: Իսկ վորպեսզի հնարավոր լինի այս, անհրաժեշտ և վերացնել պետական այն ամբողջ ապարատը, վորի միջոցով բուրժուազիան եր ձեռքում եր պահում այդ բոլոր հարստությունները:

Ահա այդ պատճառով անհրաժեշտ ե.

1. Փշել և վերացնել բուրժուական կառավարության բոլոր հաստատությունները (չինովնիկությունը, վոստիկանությունն ու դատարանը) և փոխարինել այն բանվար և գյուղացիական պատգամավորների խորհուրդներով և խորհրդային վարչական ապարատով:

2. Արձակել և ցրել մշտական հին զորքը և փոխարինել այն բանվորական բանակով, զինաթափ անել բուրժուազիան և զինել բանվորագյուղացիական մասսաները (հոդ. 3, կետ 7):

3. Բաժանել յեկեղեցին պետությունից և ազատել գոլրոցները յեկեղեցուց (հոդ. 13):

4. Ազատել մամուլը ֆինանսական կապիտալի իշխանությունից (հոդ. 14):

Բուրժուազիայի իշխանության ամբողջ այս ապարատի ջախջախումով միայն և նրա փոխարինումով խորհրդային նոր ապարատով, հնարավոր կը լինի ապահովել փոխանցումն զեպի սոցիալիստական հասարակակարգը:

§ 11. Ի՞ՆՉ ԽՆԴՐՆԵՐ Ե ԴՆՈՒՄ ՄԵՐ ԱԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍՐԱԿԱԿԱՐԳԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իր գեկարացիայի մեջ նա հայտարարում ե.

ա) հողի մասնավոր սեփականության վերացումն, ընդհանուրի սեփականություն հոչակելով հողային բովանդակ փոնդը, ինչպես նաև անտառները, հողի խորքերը և ընդհանուր պետական նշանակություն ունեցող ջրերը (հոդ. 3, կետ 1 և 2):

բ) հողի ազգայնացումն, հողային բովանդակ ֆոնդը տրամադրելով աշխատավորներին, առանց վորհե վճարի՝ հավասարական հողոգտագործման սկզբունքներով, ընդհանուր պետական տնօրինության ներքո թողնելով որինակելի կալվածքները և գյուղատնտեսական ձեռնարկությունները (հոդ. 3, կետ 1 և 2).

գ) գործարանների, հանքերի, յերկաթուղիների և արտադրական այլ միջոցների ու արանապորտի մասնավոր սեփականության աստիճանական փոխանցումն Բանվոր-Գյուղացիական Հանրապետության սեփականության, աշխատավորների իշխանությունը շահագործողների վրա ապահովելու նպատակով հաստատելով բանվորական վերահսկության և ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի մասին հրատարակած գելրեանները (հոդ. 3 կետ 3).

դ) Ռուսական բոլոր մասնավոր բանկերի պետականացումն, իսկ միջազգային ֆինանսական կապիտալի ջախջախման նպատակով՝ առվոչինչ հայտարարումն (այսինքն վերացումն) բոլոր այն փոխառությունների, վոր ինքել են նախորդ կառավարություններն, այսինքն՝ թագավորի, կալվածատերի և բուրժուազիայի կառավարությունը, (հոդ. 3, կետ 4 և 5) և

ե) վերացումն հասարակության պարագիտական (այսինքն՝ ուրիշի աշխատանքով ապրող) խավերի, աշխատանքային պարհակ (կոո) սահմանելով բոլորի համար, (հոդ. 3, կետ 6), վորովհեան Բանվոր-Գյուղացիական կառավարության լոգունզն ասում ե.՝ «Ու չի աշխատում, նու չպետք ուտի» (հոդ. 18):

§ 12. Ի՞նչ ՃԱՆՍՊԱՐՉՈՎ ՊԵՏՔ Ե ԿԵՆՍԱԳՈՐԾԻ ԱՅՍ ԲՈԼՈՐԸ ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Դասակարգային պայքարը, քաղաքացիական պատերազմը հաղթական վախճանի հասցնելու միջոցով, ինչպես

նաև բանվոր գասակարգի գերիշխանությունը (զիկտատության) սահմանելով, այսինքն հաստատելով քաղաքի և գյուղի պրոլետարիատի և շքավոր դյուկացիության իշխանությունը (հոդ. 9):

§ 13. ԻՆՉՈՐԵՍ ՀԱՍԿԱՆԱԼ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դասակարգի գերիշխանությունը, դա վորհե մի դասակարգի ձեռքով պետական ամբողջ իշխանության գրավումն է, մի կողմ շղթաելով բոլոր մյուս դասակարգերը և այդ իշխանության անողոք կենսազործումն: Բուրժուազիան իր իշխանությունն իրազործում և դաժան և վարձկան գեներալներին հատուկ և բացառիկ լիազորություններ շնորհելու միջոցով: Բանվոր դասակարգն իր գերիշխանությունն ըմբռնում է, վորպես «Խորհրդային Համառուսական հզոր իշխանություն» (հոդ. 9), խորհուրդների առջև ամենապատասխանառու գիրքերին կանգնեցնելով իր լավագույն մարտիկներին, կոմունիստական կուսակցությունը: Այս կամ այն գերիշխանության հաղթանակից և կախված քաղաքացիական պատերազմի յելքը:

§ 14. „ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ“ ԱՍԵԼՈՎ Ի՞նչ ԵՆՔ ՀԱՍԿԱՆՈՒՄ

Դա—դասակարգի պայքարի վերջին աստիճանն է, յերբ նրանք իրար դեմ են յեխում զենքը ձեռքերին և պետք է կովեն մինչև կողմերից վորհե մեկի հաղթանակը: Կապիտալիստական դարաշրջանում դա—միակ արդարացի պատերազմն է: Իսկ իմպերիալիզմի դարսում, յերբ կապիտալիզմն արդեն պարզոր կերպով միջազգային բնույթ և ստացել, քաղաքացիական պատերազմն ել և միջազգային չափեր ընդունել: Ուսւաստանի սոցիա-

վիստական ֆեղերատիվ խորհրդային նեյտրալ (չեզոք) հանրապետության և նրա պրոլետարական կարմիր բանակի վրա քաղաքացիական պատերազմով ելին գալիս բոլոր յերկրների իմպերիալիստները, չնայած իրանց ներքին տարածայնություններին, սերտ միավորություն ստեղծելով ոռուս սպիտակ գվարդիականների հետ, մինչդեռ կարմիր բանակն են լցվում աստիճանաբար վոչ միայն Ռուսաստանի, այլ և ամբողջ աշխարհի իրապես գիտակից պրոլետարները։ Այսպիսով մի յերկրի սահմաններում դասակարգի տարած հաղթանակով դասակարգերի պայքարը դեռ ավարտված չե։ Նա շարունակվում է, միայն թե այլ միջոցներով։

Լոկ այն ժամանակ, յերբ քաղաքացիական պատերազմը կը բռնկի ամբողջ Յեվրոպան և պրոլետարիատն ամենուր՝ հաղթանակող կը հանդիսանա համաշխարհային այդ քաղաքացիական պատերազմում, — կը վերանա մարդկության բաժանումը զանազան դասակարգերի և պրոլետարիատի գերիշխանությունը կը վերածվի աշխատավորների խաղաղ սոցիալիստական գործակցության, այսինքն՝ բովանդակ մարդկության գործակցության։

§ 15 ՎՈՐՆ Ե ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒՅՑԸ

Դա—պրոլետարիատի և չքավոր դյուլացիության գերիշխանության սահմանադրությունն է, քաղաքացիական պատերազմի սահմանադրությունն նա կենաց և մահու պայքարի յե կոչվում Սոցիալիստական Հանրապետության համար և նրա լոգունզն է. — Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք» (հոդ. 89):

Իր համերաշխանությունը բոլոր յերկրների պրոլետարիատի հետ այդ սահմանադրությունն ընդգծում է իր գեկարածիվ մասում (հոդ. 4), արտահայտելով Ռ. Ս.

Ֆ. Խ. Հ-ն աննկուն վճռականությունը—դուրս կորզել մարդկությունը միջազգային ֆինանսական կապիտալի և իմպերիալիզմի լծի տակից, վորոնք վերջին այս և գերահանցանք պատերազմի ընթացքում արյան ծովերի մեջ խեղզեցին վողջ աշխարհի։ Նա արտահայտում է իր այդ կոչը նրանով, վոր իրար գեմ պայքարող զորաբանակների մեջ գտնվող բանվորների և գյուղացիների յեղբայրացումն ե կազմակերպում։ Իր այս լոգունզը նա ի կատար ածեց 1922 թվի գնկտեմբերին, կազմակերպելով Ս. Խ. Հ-ն, վորպես ապագա և համաշխարհային Ս. Խ. Հանրապետության հիմնաքարը։ Միաժամանակ և իրականում ուստական քաղաքացիների քաղաքական բոլոր իրավունքները նա տալիս և նաև այն բոլոր ստարյերկրացիներին, վորոնք բնակվում են Ռ. Ս. Ֆ. Հ-ի կամ՝ Ս. Խ. Հ-ի տարիապետականությունների համար և յեթե միայն նրանք պատկանում են բանվոր գասակարգին, կամ ուրիշի աշխատանքով չապրող գյուղացիությանը (հոդ. 20): Նմանապես ապաստարան և տալիս նաև այն բոլոր ստարյերկրացիներին, վորոնք իրենց յերկրներում հալածանքների յեն յենթարկվում քաղաքական կամ կրօնական հանցագործությունների համար (հոդ. 21):

§ 16. ԴԱՍԱԿԱՐԳԻ թԵ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Հանրապետությունը, — դա կոմունիստական կուսակցության կողմից ղեկավարվող դասակարգի ղերիշխանությունն է։ Կոմունիստական կուսակցությունն, ինչպես և բոլոր այլ կուսակցությունները դասակարգացին կազմակերպությունն է։ Սակայն կուսակցություն լինելով և շիտակ կերպով ըմբռնելով և մեկնելով բանվոր դասակարգի հիմնական շահը, նա միաժամանակ այդ դա-

սակարգի ավանդաբղն ե հանդիսանում։ Ոգտվելով այդ դասակարգի, ինչպես նաև նրան հարող լայն մասսաների վստահությունից, նա իրազործում է այդ գերիշխանությունը, պրոլետարիատի հեղափոխական շահերը աչքի առաջ ունենալով։ Այդ իսկ պատճառով կոմունիստական կուսակցական կառավարությունը միաժամանակ հանգես է գալիս նաև վորպես պրոլետարիատի և չքաղոր ու աշխատավոր դյուզացիության լայն մասսաների գերիշխանություն։

§ 17. Ի՞նչ ՓՌՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ե ՄՏՑՆՈՒՄ ՆԵՐ-Ը ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Տնտեսական նոր քաղաքականությունը (ՆեՊ-ը) փոփոխություններ ե մտցնում անտեսական փոխհարաբերությունների մեջ։ Նա հանգես է գալիս վորպես հեղափոխության անտեսական մի նահանջ, սակայն, վոչ վերջնական պարտության իմաստով, այլ գալիք առաջիսաղի նպատակով։ Պահպանելով հողի և արտադրության այլ միջոցների և արանսազորակի ազգայնացումը, ինչպես նաև արտաքին առևարի մենաշնորհը, նա վոչ՝ մի զիջում չե մտցնում սահմանադրության մեջ։ Բանվորների և գյուղացիների խորհուրդների գերիշխանությունը պահպանվում է կատարյալ անձեռնմխելիությամբ և նրա աշխատանքը շարունակվում է ավելի ևս կազմակերպ և համակարգ թափով։ Նշանակում ե, վոր կատարվել է մի քայլ առաջ և վոչ թե մի քայլ հետո։



II.

**Ա. Ի. Ֆ-ի ՅԵՎ. Ռ. Ա. Ֆ. Խ. Հ-ն ՍՍՀ-ՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆՑ ՀԵՄՆԱԿԱՆ
ԴՐՈՒԹՅՈՒՆԵՐԸ**

§ 18. Ի՞նչ Են ՆՇԱՆԱԿՈՒՄ Ռ. Ա. Ֆ. Խ. Հ-ԵՎ Ս. Խ. Հ-Ա. ՏԱՌԵՐԸ

Ռ. Ա. Ֆ. Խ. Հ. տառերը նշանակում են։ — Թուսատանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային հանրապետություն։

Այն հանդամանքը, վոր բանվոր-գյուղացիական պետությունը հանրապետություն և կոչվում, վոչ մի բացարարիք չի զուտ։ Վորքան ել վոր տիտուր և յեղել բանվոր գաղաքարդի փորձը բուրգուական հանրայի պետությունների կառուցման մեջ, հանրապետություն պետությունների կառուցման մեջ, հանրապետությունների պատմականորեն իր վորոշ նշանակությունն ե ստացել, վորպես ազատ և անկաշկանդ լոկ սոցիալիզմ՝ իրականացնելու գործության վրա մի պետության գաղափար, վորտեղ իշխանության վրա և կանգնած ընտրովի մարդիկ և չկան ժառանգական թաղավորներ, արքաներ և իշխաններ։

Բանվոր-գյուղացիական հանրապետությունը կոչվում է Սոցիալիստական այն պատճառով, վոր թեև նրա կոչումը լոկ սոցիալիզմ իրականացներն ե, սակայն հենց այդ նպատակներն առաջադրող բանվորական միավորությունն արգեն սոցիալիստական հասարակության բոլոր նշաններն ունի (հոդ. 10)։

Բանվոր-գյուղացիական հանրապետությունը կոչվում է Ֆեդերատիվ, վորովհետեւ նո թողնում ե, վոր այդ հան-

բապետության կազմի մեջ մտնող յուրաքանչյուր ազգությունն ու շրջանը ինքը վորոշի, թե ինչ պայմաններով ե կամենում նա մտնել խորհրդային կազմակերպությունների միության մեջ (հոդ. 7):

Բանվոր-գյուղացիական հանրապետությունը կոչվում է Խորհրդային ի հակադրումն պարլամենտական հանրապետության, վորովհետև նրա գլուխն են կանդնած բանվոր և գյուղացիական պատգամավորների Խորհուրդները (հոդ. 1), այսինքն՝ լոկ աշխատավոր գասակարգի ներկայացուցությունը, մինչդեռ պարլամենտական հանրապետությունը կառավարում է ցենզավոր տարրերի, այսինքն ունեոր գասակարգերի միջնորդ:

Բանվոր-գյուղացիական հանրապետությունը կոչվում է Ռուսաստանի, վորովհետև պատմականորեն և տերիտորյալ իմաստով՝ նա բուրժուական, իսկ ավելի առաջ ոռւսական միահեծան պետության ժառանգորդն է:

Բանվոր-գյուղացիական գաշնակցային հանրապետությունը Ս. Խորհրդային Հանրապետությունների միություն է կոչվում այն պատճառով, վոր նա միավորում է բանվոր-գյուղացիական չորս հանրապետությունն:

§ 19. ԻՆՉՊԵՍ Ե ՆԱՅՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ „ՌՈՒՍԱՍՏԱՆԻ“ ԱՆՎԱՆ ՎՐԱ

Այդ բնավ չի նշանակում, թե բանվոր-գյուղացիական հանրապետությունը անպայմանորեն պնդում է, վոր այդ պետության պատմական կազմությունը անձեռնմխելի ննա: Սահմանադրությունն ընդունում է «ազգությունների ազատ ինքնորոշման» սկզբունքը (հոդ. 4): Նա վողջունում է Ֆինլանդիայի լիակատար անկախության հաշակումը (հոդ. 6), և Համառուսական Համագումարին ու Համառուսական Կենտրոնական կոմիտեն ե թողնում ճանաչել Ռուսաստանի Ֆեղերացիայի յուրաքանչյուր մասի անջատիելու իրավունքը (հոդ. 49, կետ. 5):

§ 20. ԸՆՍ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԻՆՉԻ ՎՐԱ Ե ՀԵՆՎԱԾ „ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ“ ԱՆՈՒՆԸ

Սահմանադրությունն ասում է, վոր «Ռուսաստանի Հանրապետությունը Ռուսաստանի բոլոր աշխատավորների սոցիալիստական ազատ այնպիսի մի հասարակություն ե», վորտեղ «բովանդակ իշխանությունը պատկանում է քաղաքային և գյուղացիան խորհուրդներում միավորված յերկրի ամբողջ բանվոր գասակարգին» (հոդ. 10): Տարբեկրի սությունը Սոցիալիստական և Խորհրդային անունների մեջ այն է, վոր Խորհրդային Հանրապետությունը, դա— մեջ այն է, վոր Խորհրդային Հանրապետությունը, դա— աշխատավորների գասակարգային միավորությունն է պետության մեջ՝ բուրժուագիային ճնշելու և սոցիալիզմը կիրարկելու նպատակով (հոդ. 9), իսկ աշխատավորների սոցիալիստական հասարակությունը նպատակ ունի խորհրդային պետության սահմաններում աստիճանաբար անցկացնել արտադրության բոլոր միջոցների, հողի և այլն աղջայնացումն (հոդ. 3): Ինչ չափով վոր բուրժուազիան ճնշվում է և վերանում է մարդկանց բաժանումը դասակարգերի, պետությունն եւ, այսինք՝ պրոլետարիատի կերպությունը ի գեմս Խորհրդային Հանրապետության, դառնում է ավելորդ և վերանում է: Այն ժամանակ կմա լոկ աշխատավորների սոցիալիստական հասարակությունը:

§ 21. ԻՆՉՊԵՍ Ե ՀԻՄՆԱՎՈՐՎՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ „ՖԵՇԵՐԱՏԻՎ“ ԲԱՐԸ

Սահմանադրությունը հոչակում է, վոր «Ռուսաստանի Խորհրդային Հանրապետությունը հիմնվում է ազատ ազգությունների ազատ միության հողի վրա, վորպես խորհրդային ազգային հանրապետությունների ֆեղերացիային անդամականությունների միավորության միաւթյուն և նշանակում է նա ընդգծում է այն հանգամբությունն ու աշխատավորների սոցիալիստական հասարակությունը:

մանքը, վոր բանվոր-գյուղացիական հանրապետության բաղադրիչ մասն են հանդիսանում բաղադրիչ ազատ մասերը, ազգային հանրապետությունները։ Սահմանադրության հիմնական միտքն այն է, թե բանվոր-գյուղացիական միավորությունը բաղադրիչ այդ մասերի առավելագույնն է պահանջում, վորպես մի ամբողջական մարմինի։ Սակայն «ձգտելով առեղծել իրապես ազատ և կաժավոր, հետեաբար և առավել ևս կատարյալ և կայուն մի միություն Ռուսաստանի բոլոր ազգությանց աշխատավորներից», սահմանադրությունն իր գեկլարատիվ մասում հայտարարում է, վոր նա սահմանափակված և Ռուսաստանի Խորհրդային Հանրապետությանց ֆեդերացիայի լոկ հիմնական սկզբունքների բնորոշմամբ, թողնելով, վոր յուրաքանչյուր ազգության բանվորներն ու գյուղացիները հենց իրանք, ինքնորեն կերպով, իրանց Խորհուրդների սեփական լիազոր համագումարում վորոշեն այն հարցը, թե ցանկանում են արդյոք նրանք և ինչ պայմաններով մասնակցել ֆեդերալ կառավարության և ֆեդերալ այլ և միացյալ Խորհրդային հաստատությունների մեջ։ (հոդ. 8)։ Սահմանադրությունը թույլ և տալիս այն «շրջանների խորհուրդներին», վորոնք տարբերվում են իրանց ուրույն կերպով և ազգային կազմությամբ, միավորվել շրջանային ավտոնոմ (ինքնորեն) միությունների շուրջը, վորոնց զլուս են կանգնած Խորհրդային շրջանային (օբластներ) համագումարներն ու նրանց գործադիր մարմինները։ Շրջանային այդ ավտոնոմ միությունները ֆեդերատիվ սկզբունքով մտնում են Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետության մեջ (հոդ. 11)։ Իսկ Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետության մեջ նոր անդամներ ընդունելու իրավունքը պատկանում է Խորհուրդների Համառուսական Համագումարին և Համառուսական կենտրոնական (հոդ. 49, կետ 5)։

§ 22. ԻՆՉՊԵ՞Ս Ե ԲԱՑԱԴՐՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ „ԽՈՐՀՐԴԱՅԻՆ“ ԽՈՍՔԸ

Համառուսական Յ-րդ Համագումարի կողմից ընդունված է, վոր «այժմ պրոլետարիատի և շահագործողների միջև բռնկված վճռական այս սպայքարի պահին, իշխանության որգաններից և վոչ մեկի մեջ տեղ չեն կարող ունենալ շահագործողները, և վոր իշխանությունը ամբողջապես և բացառապես պետք և պատկանե աշխատավոր մասսաներին և նրանց լիազոր ներկայացուցչությանը՝ բանվորների, զինվորների և գյուղացիների պատկամավորների խորհուրդներին (հոդ. 7)։ Կենտրոնում և թե տեղերում ամբողջ իշխանությունը պատկանում է Խորհուրդներին (հոդ. 1, կետ 10)։ Խորհուրդների Համառուսական Համագումարը Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. գերագույն իշխանությունն է (հոդ. 24), իսկ խորհուրդների ընտրություններին մասնակցում են լոկ աշխատավորները (հոդ. 64)։

§ 23. ԻՆՉՊԵ՞Ս Ե ԲՆՈՐՈՇՎՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Սահմանադրության խոսքերով, Ռուսաստանի Հանրապետությունը բոլոր աշխատավորների սոցիալիստական ազատ հասարակություն է (հոդ. 10)։ Այդ Հանրապետության հիմնական խնդիրը, ինչպես մենք այդ տեսանք նաև ասում ենք պարբերացից, քաղաքի և գյուղի պրոլետարիատի և խորդային գյուղացիության հզոր գիկատառութայի սահմանափակությունը կամ կամ կամ համառուսական Խորհրդային իշխանության մեջ (հոդ. 9)։

§ 24. Ի՞ՆՉ Ե ՆՇԱՆԱԿՈՒՄ Ս. Խ. Լ. Մ.

1922 թվի գեկտեմբերին միավորական և Համագումարին Խորհրդային Սոցիալիստական չորս հանրապետու-

թյանց բանվորա-գյուղացիական խորհուրդների պատգամավորները, այն ե.—Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.-ն, Ռ. Ս. Խ. Հ.-ն, Բել. Ս. Խ. Հ.-ն և Անդրկ. Ս. Ֆ. Խ. Հանրապետության խորհուրդների պատգամավորները միությունական պայման կապեցին Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությանց Միություն (Ս. Խ. Հ. Ֆ.) կազմելու մասին։ Այդ միությունը հիշյալ Խորհրդային Հանրապետությունների միջև առաջներում գոյություն ունեցող պայմանների ավելի ևս մերձավոր միավորումն եր, հանրապետությունների, վորոնցից յերկուսը—Ռ.Ս.Ֆ.Խ.Հ.-ն և Ա.Ս.Ֆ.Խ.Հ.-ն ֆեդերատիվ միավորություններ են։ Այդ միությունից դուրս են մնում առայժմ՝ խորհրդային ժողովրդական հանրապետություններ—Բուլարան և Խորեգմբ, վորոնք դեռ ևս խորհրդային չլինելով, հարում են միությանն առայժմ՝ լոկ պայմանագրական հիմունքներով։ Նոր միավորությունը հանրապետությունների սոսկական և սովորական մի միություն չե լոկ, այլ դաշնակցային հանրապետություն միասնական կառավարությամբ և միասնական ներկայացուցչությամբ արտաքին հարաբերությունների մեջ։

Պայմանագրը նախնական և համարվում և մանրազնին քննությունից հետո յենթակա յե խորհուրդների միություննական հետեւյալ համագումարի հաստատման։
Այս պայմանագրի հիման վրա միության կենացործ-կոմի 1923 թվի հունիսի 6-ի 11 սեսիան (նոտաշրջանը) ընդունեց դաշնակցային Սահմանադրությունը, վորպիսին բաղկացած և գեկարացիայից և պայմանագրությունից։ Այդ սահմանադրությունը հաստատվեց Միություն Խորհրդների II Համագումարին, վոր կայացավ 1924 թվի հունվար ամսի 31-ին։

§ 25. ՎՈՐՆ Ե ՄԻՈՒԹՅՈՒՆԱԿԱՆ ԱՅԴ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Մի կողմից՝ փոխադարձ ավելի ևս մերձեցումը.—պետությունների միությունից (դաշնակցությունից) Հան-

րապետությունը վերածվում է միությունական (դաշնակցային) պետության՝ գլուխ ունենալով միասնական ինքնորեն մի իշխանություն, այսինքն՝ խորհրդային կենտրոնացված միասնական կառավարություն, միությունական համագումար, միություննական կենացործկոմ, միություննական ժողովում և միություննական Գերագույն դատարան։ Մյուս կողմից՝ պայմանագիրն ել ավելի յե ճշշտորշում կենարոնական իշխանության ձեզ և ստորաբաժանում ե անցկացնում կենարոնական իշխանության և առանձին հանրապետությունների տեղական իշխանությունների միջև։ Իսկ միաժամանակ պայմանագիրը պարզուցում է նաև յուրաքանչյուր հանրապետության իրավունքը միությունից գուրս գալու մասին։ Իսկն այդ պայմանագիրը վերացվել կամ փոփոխվել կարող ե իր համանական սկզբունքների մեջ լոկ խորհրդների միություննական համագումարից։

Այժմ միության ԿԳԿոմի Խ-ըդ սեսիայում հաստատված և միության Սահմանադրությունը, վոր բաղկացած և 1922 թվի գեկամեբեր 30-ի գեկարացիայից և դաշնակցային պայմանագրից, վորի մեջ դաշնակցային բոլոր հանրապետությանց ընդհանուր համաձայնությամբ մուծված են չսին փոփոխություններ։

Միության հիմնական մասերից մեկն ե Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետությունը, այդ իսկ պատճառով այստեղ մենք կուսումնակիրենք լոկ նրա սահմանադրությունը, վորպիսին վոր միայն պատմական մի փաստաթուղթ ե, այլև պահպանում ե իր ույժը բոլոր այն կետերում, վորաեղ նա չի հակասում դաշնակցային պայմանագրին։ Ռ.Ս.Ֆ.Խ. Հանրապետության սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ կմուծվեն, հավանորեն Ռ.Ս.Ֆ.Խ. Հանրապետության խորհրդների հետեւյալ համագումարին։



III

ԽՈՐՀՐԴԱՅՑԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 26. ԽՈՐՀՐԴԱՅՑԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՄ Ե ՎԵՐԱ-
ՊԱՀՈՒՄ ԲՈԼՈՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բուրժուական սահմանադրությունները սովորաբար խոսում են առանց բացառության բոլոր մարդկանց ազա-
տության, հավասարության և յեղբայրության մասին։ Սա-
կայն այդ սնամեջ մի կեղծավորություն ե, վորովհետեւ
այդ ազատությունը, հավասարությունը և յեղբայրությունը
երականում ապահովված ե լոկ բուրժուազիայի համար։

Խորհրդային սահմանադրությունը անքողարկ և պարզ
կերպով հայտարարութեամ ե, վոր նա ազատություն և
խոստանում լոկ աշխատավոր գասակարգին, սակայն՝ այդ
դասակարգը, նախ և առաջ, արդեն իսկ այժմ ազգաքնակ-
չության խոշոր մեծամասնությունն ե ընդգրկում, իսկ
տպա՛նտ քանի գնում աճում և ծավալվում ե և տպագո-
յում կընդգրկի բովանդակ մարդկությունը։ Միաժամա-
նակ մեր սահմանադրությունը վո՛չ միայն խոստանում ե,
այլև իրավես ապահովում ե թե՛ այդ ազատությունները,
և թե՛ նրանցից ովտավելու միջոցները։

§ 27. ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատավորների համար իրանց կարծիքներն արտա-
հայտելու իրական ապահովություն ստեղծելու նպատակով,

սահմանադրությունը վերացնում է մամուլի կերությունը
կապիտալից և բանվոր դասակարգի ու զյուղացիության
չքավոր տարրերի ձեռքն ե տալիս տեխնիքական և նյու-
թական այն բոլոր միջոցները, վորոնք անհրաժեշտ են
լրագրների, գրքերի, բրոցյուրների և մամուլի բոլոր այլ
տեսակների հրատարակության համար, ինչպես նաև ա-
պահոված ե նրանց ազատ տարածումը (հոդ. 14)։ Բան-
գորա-զյուղացիության մամուլի ամենապլիավոր արգելակն
և յեղել միշտ կապիտալի, տպարանների, թղթի և այլ
նյութերի բացակայությունը։ Միևնույն ժամանակ բան-
կերը և այլ կապիտալիստները բուրժուական մամուլին
և յին տրամադրում վո՛չ միայն տպարաններ, թուղթ և
գրամ, այլ և բարձր գնահատավոր հայտարարություններ։
Սահմանադրությունը պարտավորվում է այդ բոլորը բա-
րեփոխել ի նպաստ բանվորա-զյուղացիության մամուլի։

§ 28. ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՐԻ ԳԻՏՈՒ-
ԹՅՈՒՆԸ

Աշխատավորների համար խղճի կատարյալ ազատու-
թյունն ապահովելու նպատակով, բանվոր և զյուղացիա-
կան մասսաների խիղճը ազատագրվում է պարտագիր և
կամ արտօնյալ ազգեցություններից, անջատելով յեկեղե-
ցին պետականից և դպրոցը՝ յեկեղեցուց։ Միաժամա-
նակ բոլոր քաղաքացիների համար միանգամայն ազատ և
համարում թե՛ կրօնական և թե՛ հակակրօնական պրոպա-
գանդի իրավունքը (հոդ. 13)։

Սակայն խղճի վրա յեկեղեցու ունեցած ազգեցու-
թյան դեմ մղած պայքարի լավագույն միջոցն ե համար-
վում աշխատավորների համար դեպի գիտությունը տա-
նող ճանապարհի ապահովումը։ Սահմանադրությունն այս
տեսակետից թ. Ս. Ֆ. Խ. Հանրապետության ինդիքն և
համարում բանվորների և չքավոր գյուղացիների համար

ապահովել լիակատար և բազմակողմանի ձրի ուսումը
(հոդ. 17):

§ 29. ԺՈՂՈՎՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Ճանաչելով Խորհրդային Հանրապետության քաղաքացիների իրավունքը ազատ կերպով ժողովներ, միտինգներ, շերթներ և այլն կազմակերպելու մեջ, սահմանադրությունը բանվոր դասակարգի և չքավոր գյուղացիության տրամադրության տակ և գնում ժողովրդական նմանորինակ հավաքույթների տեսակետից հարմար բոլոր շենքերը իրենց սարք ու կարգով, լուսավորությամբ և վառելիքով (հոդ. 15): Այսուհետև դպրոցական և հասարակական բոլոր այդ շենքերը զբաղմունքներից ազատ ժամերին, ինչպես քաղաքներում, այնպես ել գյուղերում պետք ե տրամադրվեն աշխատավոր ժողովրդին՝ իր ժողովների համար, և նա այլևս հարկադրված չել լինի թագնվել անտառներում կամ դադոնի բնակարաններում:

§ 30. ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Աշխատավորների համար միությունների իրական աշխատավորության ապահովումը սահմանադրությունը նկատում է ունեոր դասակարգերի տնտեսական իշխանության ջախջախման, ինչպես նաև՝ բանվորներին և չքավոր գյուղացիներին նյութական և այլ տեսակի աջակցություն ցույց տալու մեջ՝ նրանց միավորման և կազմակերպման նպատակով (հոդ. 16): Այդ գեռ քիչ ե. փոչ միայն աջակցություն, այլ և ուղղակի գործադրված ճնշում և կատարում բանվոր-գյուղացիական հանրապետությունը, անզարդացած մասսաների կազմակերպման համար, վորովհետև բանվորների և չքավոր գյուղացիության լոկ այդորինակ կազմակերպության մեջ և նրա սեփական ույժը:

§ 31. ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրությունը միանգամայն հավասար ճանաչելով բոլոր քաղաքացիների իրավունքները, անկախ նրանց ազգային և ցեղային պատկանելիությունից, Հանրապետության հիմնական որենքներին միանգամայն հակասող և համարում ազգային կամ ցեղային խնդրի մեջ վորևե արտոնություններ թույլատրելու հանգամանքը, ինչպես նաև ազգային փոքրամասնությանց այս կամ այն ձեր ճնշումն ու նրանց իրավահավասարության սահմանափակումը (հոդ. 22):

§ 32. ՈՎ Ե ՊԱՇՏՈԱՆՈՒՄ ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՅՍ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Այդորինակ պաշտպանությունը սահմանադրությունը Հանրապետության բոլոր քաղաքացիների պարտականությունն և համարում և այդ իսկ պատճառով զինվորական ընդհանուր պարհակ և նշանակում: Սակայն սոցիալիստական հայրենիքի զինյալ պաշտպանությունը պատվավոր իրավունք և համարվում և տրվում և լոկ աշխատավորներին: Անաշխատ տարրերը բնավ չեն ազատված այդ պարհակից, սակայն՝ նրանց վրա զինվորական այլ պարտականություններ են դրվում (հոդ. 19):

§ 33. ԱՅԴ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ՄԵԶ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՅԵՆ, ԹԵՇ ՎՈՉ

Քանի դեռ չեն վերացված դասակարգերը և հանրապետության բոլոր քաղաքացիներն ել դեռ աշխատավոր չեն դարձել, — այլ դասակարգերը (շահագործողները, անաշխատները) իշխանություն վոչ մի մարմի մեջ մտնելու ի-

բավունքը չունեն (հոդ. 7): Սակայն, զեկավարվելով բանվոր գասակարգի ամբողջական շահերով, Սահմանադրությունը հնարավոր է գատում զրկել իրավունքներից նաև աշխատավորական առանձին խմբերին կամ անհատներին, յեթե նրանք այդ իրավունքները գործադրում են ի վեաս սոցիալիստական հեղափոխության շահերի (հոդ. 23):

IV.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ԿԵՆՑՐՈՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

§ 34. Ի՞նչ է ՆՇԱՆԱԿՈՒՄ «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՆՈՒՆԸ

Խորհրդային իշխանությունը, դա—պետական այն իշխանությունն է, վորագեղ նրա ամբողջությունը թե՛ կենտրոնում և թե՛ տեղերում պատկանում և բանվորների և այլ աշխատավորների խորհուրդներին և այդ խորհուրդների համագումարների կողմից ընտրվածներին: Սահմանադրությունն այդ գաղափարն արտահայտում և հետեւ խորհրդական ամբողջ իշխանությունը պատկանում է քաղաքային և զյուղական խորհուրդներում միավորված յերկրի բոլորների բանվոր ազգաբնակչության (հոդ. 10): Կենտրոնում և տեղերում ամբողջ իշխանությունը պատկանում է այդ խորհուրդներին (հոդ. 1):

§ 35. Ի՞նչորիս ՓՈԽԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆ
Ռ. Ս. Ֆ. Խ. Լ.-Ի ՅԵՎ Ս. Խ. Լ. Մ.-Ի ՄԻԶԵՎ

Ինչորես մենք արդեն տեսանք, Ռ. Ս. Ֆ. Խ. Հ-Ն Ս. Խ. Լ. Մ.-Ի բաղադրիչ մասերից մեկն և լոկ: Այդ նշանակում և, վոր բոլոր այն ինդիբներում, վորոնք, ըստ դաշնակցային պայմանագրի, վերադրված են Միության տնօրինության, —միության գերագույն իշխանությունը Մի-

ությունական համագումարն ե, Միության կֆեռմը և Միությունական ժողկոմիսորմը: Միության համագումարը կֆեռմը իրավազոր են վերացնել և փոխել դաշնակցային պայմանագիրը խախտող այն բոլոր վորոշումները, վոր դուքս կը բերեն Ռ. Ս. Ֆ. Խ. Հ-ն և դաշնակցային այլ պետությունների խորհուրդների համագումարները, կֆեռմները և ժողկոմիսորները: Սակայն, բոլոր այլ խնդիրներում Ռ. Ս. Ֆ. Խ. Հ-ն պահպանում է նախկին իր ռահմանադրությունը:

§ 36. ՈՎ Ե ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Ռ. Ս. Ֆ. Խ. Լ.-Ի ՅԵՎ Ս. Խ. Լ. Մ.-Ի ԳԵՐԱԳՈՒՅՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առաջինի համար գերագույն իշխանություն ե հանդիսանում բանվորների, դյուղացիների, կարմիր բանակացինների (անցյալներում՝ զինվորների) և կողակների պատգամավորների Խորհուրդների Համառուսական Համագումարը (հոդ. 24), իսկ յերկրորդի համար՝ Խորհուրդների Միությունական Համագումարը, վորոնք գումարվում են վոչ ուշ, քան տարին. մեկ անգամ (հոդ. 26): Համագումարից համագումար տեսող ժամանակամիջոցում Ռ. Ս. Ֆ. Խ. Հ-ի գերագույն իշխանությունն ե հանդիսանում Համառուսական Կենտրոնակոմը (ՀԿՖԿ-ն), իսկ Ռ. Ս. Ֆ. Խ. Մ.-ի Համամիությունական Կենտրոնակոմը:

§ 37. ԻՆՉ ԵՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ Հ. Կ. Գ. Կ. ՅԵՎ Մ. Կ. Գ. Կ. ՏԱՐԵՐԸ

